

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՏԴ 316.485

Ն.Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Դիտարկվում է քաղաքական գիտության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, ինչպիսին ներքաղաքական կոնֆլիկտն է: Անդրադարձ է կատարվել նրա էությանը, բնույթին, տիպերին և արդիականությանը: Վերլուծության են ենթարկվել ներքաղաքական կոնֆլիկտների առանձնահատկությունները՝ վարչակարգերով պայմանավորված: Վեր են հանվել հորիզոնական և ուղղահայաց կոնֆլիկտների առանձնահատկությունները և բնույթը:

Առանցքային բաներ. ներքաղաքական կոնֆլիկտ, ամբողջատիրական վարչակարգեր, գերկենտրոնացում, բազմակարծություն, հորիզոնական ներքաղաքական կոնֆլիկտ, ուղղահայաց ներքաղաքական կոնֆլիկտ, ներպետական կոնֆլիկտ:

Ներքաղաքական կոնֆլիկտի էությամբ որոշվում է քաղաքական համակարգի բնույթը: Քաղաքական համակարգին առավալապես բազմազանություն է հաղորդում քաղաքական ռեժիմը: Որպես կանոն, առանձնացվում է ռեժիմի երեք տիպ՝ ա/ ամբողջատիրական /տոտալիտար/, բ/ հեղինակային /ավտորիտար/, ժողովրդավարական /դեմոկրատական/: Քանի որ ավտորիտար ռեժիմը որոշակիորեն ներկայանում է որպես երկու ռեժիմների՝ ամբողջատիրականի և ժողովրդավարականի յուրատեսակ խառնուրդ, ուստի կուսումնասիրենք մյուս երկու քաղաքական ռեժիմները, որոնք հանդես են գալիս առավել մաքուր ձևով:

Ամբողջատիրական քաղաքական ռեժիմի բնույթն այն է, որ հաճախակի հասարակության և անհատի վրա իրականացվում է համընդհանուր վերահսկողություն պետության կողմից: Նրա բնութագրիչ գծերն են. հասարակական կյանքի համընդհանուր քաղաքականացումը և գաղափարականացումը, սոցիալական վերահսկողության սահմանումը, մրցակցության բացակայությունը, կառավարման գերկենտրոնացումը, տնտեսության կառավարման վարչահրամայական մեթոդները, ՋԼՄ-ների վրա վերահսկողության սահմանումը, վարչահրամայական համակարգի ստեղծումը և այլն:

Ժողովրդավարական ռեժիմը ամբողջատիրականի հակապատկերն է: Այս համակարգի բազային հիմքերն են. արդար ընտրությունները, օրենքի գերակայությունը, իշխանության մարմինների անընդհատ ընտրողականությունը,

սեփականության տարբեր ձևերի առկայությունը և ազատ գործունեությունը, քաղաքացիների հավասար իրավունքները հասարակության կառավարման մասնակցության գործում, անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և այլն:

Վերը նշված երկու ռեժիմների համեմատության պարագայում երբեմն հանգում ենք այն եզրակացության, որ ամբողջատիրությունը քաղաքական բոլոր չարիքների հիմքն է, իսկ ժողովրդավարությունը՝ մարդկության ապագայի: Անշուշտ, դա այնքան էլ այդպես չէ:

Ամբողջատիրական վարչակարգերում ժողովրդական զանգվածները ցանկանում են սոցիալական արդարության հիմքով արագ և արդյունավետ վերակառուցել հասարակությունը: Այդ ճանապարհին առաջանում են բազում հակասություններ, և դա բնական է, քանի որ շուկայական տնտեսությունը չի ապահովում հավասարություն, ինչը դժգոհության առիթ է տալիս, և որպես այլընտրանք առաջ է գալիս պլանային կառավարումը: Նման իրավիճակում տեղի է ունենում կառավարման ապարատի գերկենտրոնացում: Առաջ է գալիս «փակ» տիպի հասարակություն, որտեղ տիրապետող է ենթարկումը քաղաքական նպատակահարմարությանը: Հասարակության ինքնազարգացման տրամաբանությանը փոխարինում է ինչ-որ մի ուտոպիական նախագիծ, որի «իրագործումն» ուղեկցվում է բռնություններով, իսկ անհամաձայնության պարագայում ցանկացածը ստանում է «ժողովրդի թշնամի» պիտակը [1]:

Կոնֆլիկտները փոքրալիցար վարչակարգերում. Նման տիպի հասարակարգերում, որտեղ աղճատված են տնտեսության, քաղաքականության, մշակույթի ընդունելի բոլոր համամասնությունները, քաղաքական կոնֆլիկտներն ունենում են մի շարք առանձնահատկություններ.

ա/ Քաղաքական կոնֆլիկտի մի քանի հնարավոր ձևերից / շահ, կարգավիճակ, արժեքներ/ առաջին պլան է մղվում կարգավիճակային, կարգավորիչ կոնֆլիկտը՝ կապված քաղաքական համակարգին նրա սերտ կամ անջատ լինելու հետ:

բ/ Քանի որ արհեստավարժ, էթնիկական, սոցիալական խմբերի շահերը անտեսել հնարավոր չէ, իսկ ճանաչել նրանց հարաբերությունների կոնֆլիկտայնությունը՝ որպես միասնական հասարակության մաս, քաղաքական իշխանությունը չի ցանկանում: Ռեալ կոնֆլիկտների մեծ մասը դառնում են գաղտնի /լատենտային/, ճնշված: Այդ է պատճառը, որ շատ դեպքերում ամբողջատիրական վարչակարգի անկումները հանգեցնում են ուժի պողոթման, քաղաքացիական պատերազմի վտանգի: Այդ կոնֆլիկտները տեղի են ունենում բացահայտ:

գ/ Ամբողջատիրական հասարակություններում քաղաքական կոնֆլիկտները ծայրահեղ գաղափարականացված են: Նման պայմաններում տվյալ վարչակարգի գաղափարախոսությունը վեր է ածվում անվերապահ արժեքի՝ չենթարկվելով որևէ քննադատության: Ցանկացած այլախոսության դրսևորում դիտվում է որպես քաղաքական հանցագործություն:

դ/ Տոտալիտար վարչակարգի քաղաքական կյանքի գերաճը հանգեցնում է նրան, որ նույնիսկ քաղաքական կոնֆլիկտի հետ որևէ աղերս չունեցող կոնֆլիկտները դիտարկվում են քաղաքական հարթությունում:

ե/ Նման հասարակություններում կոնֆլիկտների մեծ մասը արհեստական բնույթ են կրում: Օր.՝ իշխանությունը փորձում է ժողովրդի դժգոհությունը ուղղորդել դեպի կոսմոպոլիտները, այլախոսները, որոնց վրա փորձում է բարդել իր սխալներն ու անհաջողությունները:

զ/ Ամբողջատիրական քաղաքական ռեժիմները երբեմն ձգտում են քաղաքական կոնֆլիկտի ինտերնացիոնալացմանը: Ելնելով դրանից՝ համապարփակ գաղափարախոսությունը հնարավորություն է ստեղծում՝ յուրովի մեկնաբանելու միջազգային իրադարձությունները / օր.՝ տարբեր սոցիալական խմբերի շահերի բախումը/, Երկրագնդի դիտարկումը՝ որպես երկու հակադիր համակարգերի պայքարի ասպարեզ և այլն: Այստեղից էլ առաջանում է հեղափոխության արտահանման պլանը [2]:

Կոնֆլիկտները ժողովրդավարական հասարակությունում. Ժողովրդավարական համակարգերը ևս անմասն չեն կոնֆլիկտներից, սակայն նրանց բնույթը էապես տարբեր է.

ա/ նախ՝ կոնֆլիկտները բաց են և թե՛ հասարակության, թե՛ պետության կողմից դրանք դիտարկվում են որպես բնական երևույթ և առավելապես մրցակցային բնույթ ունեն:

բ/Դեմոկրատական հասարակություններում քաղաքական կոնֆլիկտները լուրջացվում են իրենց իսկ քաղաքական միջավայրում: Նրանք քաղաքացիների անձնական կյանք չեն մտնում, տնտեսության զարգացումը չեն ենթարկեցնում իրենց պատկերացումներին և չեն միջամտում հոգևոր կյանքի գործառույթներին:

գ/ Քանի որ բոլոր սոցիալական խմբերը, խավերն ունեն բազմաթիվ միջոցներ իրենց շահերը, պահանջմունքներն արտահայտելու, իշխանության վրա ճնշում գործադրելու համար միավորվելու, ուստի կոնֆլիկտային իրավիճակները նվազ լարված են, սոցիալական բռնկման վտանգի հնարավորությունը նվազ հավանական է:

դ/ Քանի որ ժողովրդավարությունը հիմնված է պյուրալիզմի /բազմակարծության/ վրա, ուստի այն լայն հնարավորություն է ստեղծում առողջ, կառուցողական բանավեճի, որը հնարավորություն է տալիս գտնելու առավել ընդունելի գաղափարներ, մոտեցումներ կոնֆլիկտի լուծման համար:

ե/ Կարգավիճակային, գլանակերպ քաղաքական կոնֆլիկտները ժողովրդավար համակարգերում համեմատաբար առավել պակաս նշանակություն ունեն, քան շահեր ու արժեքներ հետապնդող կոնֆլիկտները:

զ/ Ժողովրդավարության ուժեղ կողմերից է ընթացակարգերի, տեղայնացման կանոնների, քաղաքական կոնֆլիկտների կարգավորման հստակ մշակումը և կանոնակարգումը:

Վերոհիշյալից չի կարելի եզրակացնել, որ ժողովրդավարությունը անվերապահորեն լուծում է բոլոր քաղաքական կոնֆլիկտները, բնականաբար, այն ունի նաև իր խնդիրները: Ժողովրդավարական համակարգի շատ ներկայացուցիչներ, ոչ առանց հիմքի, մատնացույց են անում ժողովրդավարական գործընթացների ձևական բնույթը առ այն, որ այն հենվում է միայն մարդկանց, խմբերի, իրավական հավասարության հիմքի վրա, որոնք շուկայական հարաբերությունների տիրույթում անվերապահորեն պահպանում են սոցիալական անհավասարությունը [3]: Նման ակնառու անհավասարության օրինակ է կենսաթոշակառուների և խոշոր սեփականատերերի կամ էլ կատաղի մրցակցության ժամանակ կողմերից մեկի հայտնվելը ծայրահեղ աղքատության մեջ, իսկ մյուսի՝ հարստանալը: Հարց է առաջանում. նման դեպքերում ինչպե՞ս պետք է ապահովել արժանապատիվ ապրելու, սեփականություն ունենալու, ազատ ապրելու նրանց իրավունքը:

Ամբողջատիրական և ժողովրդավարական վարչակարգերի տարբերակումների համատեքստում կարող ենք նշել, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կոնֆլիկտները առավելապես կարելի է դասել անցումային իրավիճակին բնորոշ: ՀՀ-ին առավելապես բնորոշ է քաղաքական մշակույթի կոնֆլիկտը: Հարկ է նշել, որ նման կոնֆլիկտների ժամանակ տեղի են ունենում տարբեր քաղաքական արժեքների, նորմերի, սովորույթների, ավանդույթների միջև բախումներ: Նշված կոնֆլիկտները առավել տեսանելի են արմատական բարեփոխումների ժամանակ, երբ տեղի է ունենում հին և նոր քաղաքական մշակույթների բախումը:

Այս ամենից ելնելով՝ կարող ենք փաստել, որ մեր հասարակությունը այսօր իր վրա է կրում անցման շրջանին բնորոշ բոլոր բացասական գծերը. թույլ քաղաքացիական հասարակությունը, անհանդուրժողականությունը, հասարակության պառակտվածությունը և այլն: Բնական է, որ այդ իրավիճակները

պարարտ հող են ստեղծում սուր բախումների առաջացման համար: Նման պայմաններում կոնֆլիկտները դառնում են ձգձգվող, երկարատև, անկանխատեսելի: Անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ Հայաստանում այս ամենի հետ մեկտեղ լուծված չեն արցախահայերի, գերեվարված մեր հայրենակիցների հարցերը: Եթե հաշվի առնենք հայ-ադրբեջանական պատերազմական իրավիճակը, կիսապաշտպանված սահմանները, աշխարհաքաղաքական հարահոս դրությունը, ապա պետք է նշել, որ վերը նշված խնդիրների լուծումը հրամայական պահանջ է:

Ներպետական կոնֆլիկտները կարելի է տարանջատել երկու խմբի՝ հորիզոնական և ուղղահայաց:

Հորիզոնական ներքաղաքական կոնֆլիկտ. Այս կոնֆլիկտները ներառում են քաղաքական ինստիտուտները, կառուցվածքները, տվյալ համակարգի շրջանակներում գործող իշխանությունը, պետական մարմինները, նրանցում զբաղված խմբերը, մարդիկ, ինստիտուտները և այլն [4]:

Այս կոնֆլիկտի առարկա են հանդիսանում քաղաքական համակարգի և կառավարող խմբի առանձին քաղաքական գործիչներ, որոնք չեն համապատասխանում իշխող ուժի պատկերացումներին ու շահերին: Հորիզոնական կոնֆլիկտների նպատակը գոյություն ունեցող համակարգի կատարելագործումն է: Օրինակ. ոչ արհեստավարժ լիդերների, կառավարող էլիտայի քաղաքական կուրսի մասնակի փոփոխությունները, իշխանության լիազորությունների մեծացումը կամ սահմանափակումը:

Ժողովրդավարական քաղաքական համակարգում հորիզոնական քաղաքական կոնֆլիկտները սահմանակարգված են և որոշակի առումով նաև ծրագրավորված: Այդ կոնֆլիկտների մեծ մասը բաց հանրային բնույթ ունեն, օր.՝ խորհրդարանական դեբատները /քննարկում, բանավեճ/, պառլամենտի ցրումը և նոր արտահերթ ընտրությունների նշանակումը, կառավարությանը անվստահություն հայտնելը, սահմանադրական դատարան դիմելը և այլն:

Ամբողջատիրական վարչակարգը չի ճանաչում որևէ քաղաքական կոնֆլիկտի գոյություն և ձգտում է արգելափակել այն: Եթե պատահական դիպվածով հորիզոնական կոնֆլիկտն առաջանում է, ապա այն որակվում է դավադրություն կամ պալատական հեղաշրջում:

Ուղղահայաց քաղաքական կոնֆլիկտներում հակասություններն առաջանում են «իշխանություն – հասարակություն» հարթության մեջ: Հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքը միատարր չէ: Այդ կառուցվածքի տարբեր սոցիալական շերտեր, խմբեր, դասակարգեր և էթնիկական խմբեր գրավում են զանազան դիրքեր և տարբեր դերակատարություն ունեն:

Ուղղահայաց քաղաքական կոնֆլիկտները կարելի է բաժանել երկու տեսակի.

ա/ Այս կոնֆլիկտներն օգտագործում են քաղաքական կառուցվածքում անհատական կամ խմբային կարգավիճակի բարձրացման նպատակով /օր.՝ հակասությունները կենտրոնի և շրջանների միջև:

բ/ Վարչա-քաղաքական կոնֆլիկտները նպատակ ունեն վերափոխելու գոյություն ունեցող քաղաքական կառուցվածքը կամ էլ արմատապես փոխելու ուղղությունը:

Վարչա-քաղաքական ռեժիմներում կոնֆլիկտների առաջացման պատճառներից կարելի է տարանջատել հետևյալ երկու հիմնական պատճառները.

ա/ հիմնական սոցիալ-տնտեսական, քաղաքական պահանջումքների, բնակչության զգալի մասի շահերի սահմանափակումը,

բ/ արժեքների, գնահատականների, կողմնորոշումների, նպատակների տարբերությունները և պատկերացումները հասարակության քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ:

Հիմնական պահանջումքների սահմանափակումը կարող է առաջ բերել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններ:

Օբյեկտիվ գործոններն են.

- հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման ճգնաժամը,

- դժվարությունները, որոնք կապված են հասարակության սոցիալ-քաղաքական համակարգի արմատական վերափոխումների հետ,

- չնախատեսված երևույթներ /պատերազմ, համաշխարհային տնտեսական ճգնաժամ, բնական աղետներ և այլն/:

Սուբյեկտիվ գործոններն են.

- սոցիալ-տնտեսական քաղաքականության ակնհայտ բացթողումները,

- կառավարող էլիտայի կողմից իրականացվող քաղաքականությունը ակնհայտորեն հակասում է հասարակության արմատական շահերին և պահանջումքներին,

- սոցիալական խմբերի գիտակցումը առ այն, որ ռեսուրսների բաշխումն արդար և օրինական է:

Ընդհանրացնելով կարող ենք ներկայացնել ներքաղաքական կոնֆլիկտի լուծման հետևյալ ուղիները.

ա/ Սոցիալական խուսափարման էությունը հասարակական արդյունքի վերաբաշխումն է, որը բխում է քաղաքական հակառակորդի շահերից:

բ/ Քաղաքական խուսափարումը ներառում է գործողությունների լայն շրջանակ, որը կոչված է ապահովելու տարբերակված, գիտականորեն հիմնավորված շահեր, կայուն քաղաքական այլաձև, որը ունակ կլինի կարգավորելու գոյություն ունեցող քաղաքական իշխանությունը:

գ/ Հակաէլիտայի ինտեգրումը. հարկ է նշել, որ հասարակարգի ցանկացած փոփոխություն հանգեցնում է հակաէլիտայի ձևավորմանը, որը միավորում է հասարակական դժգոհությունը: Առավել նպատակահարմար է խոչընդոտել հակաէլիտայի ձևավորումը, քանի որ նրա հիմնական գործառույթը ունի շահագործող էություն, իսկ եթե այն արդեն գոյություն ունի, ապա քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է նրան ինտեգրել քաղաքական էլիտայի հետ՝ թույլ չտալու նրա ապակայունացնող գործողությունները և իշխանության զավթումը:

Ուժային ճնշման միջոցով հակաէլիտան ձգտում է ստեղծել բաց դիկտատուրա, նպատակ ունենալով հասարակության մեջ ատելություն ներարկելու պետության նկատմամբ: Նման երևույթները պահանջում են շուտափույթ լուծումներ, հակառակ պարագայում այն կհանգեցնի քաղաքական ճգնաժամի և պետականության կազմաքանդմանը: Նման երևույթներ տեսնում ենք ՀՀ-ում, քանզի ընդդիմություն ներկայացող խմբերը առավելապես ձգտում են ունենալ չնչնակալայացնելով զարգացման որևէ ծրագիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Анцупов Л.Я., Шипилов Л.И.** Конфликтология: Учебник.- 4-е изд.- М.: ЭКСМО, 2010.- 345 с.
2. **Глухова Л.В.** Политические конфликты: основания, типология, динамика.- М.: ВГУ, 2012. - 215 с.
3. **Дмитриев А.В.** Конфликтология.- М.: Альфа-М, 2010.- 298 с.
4. **Бабосов Е.М.** Конфликтология.- Минск: Тетра-Системс, 2010.- 429 с.

Н.К. БАГДАСАРЯН

ВНУТРИПОЛИТИЧЕСКИЙ КОНФЛИКТ И ПУТИ ЕГО УРЕГУЛИРОВАНИЯ

Рассматривается одна из наиболее фундаментальных проблем политической науки: внутренний/внутригосударственный конфликт. Исследуются сущность, природа, типология и актуальность данного феномена. Проанализированы характеристики внутренних политических конфликтов в контексте различных режимов с особым акцентом на уникальные особенности и природу горизонтальных и вертикальных конфликтов.

Ключевые слова: внутренний политический конфликт, тоталитарные режимы, гиперцентрализация, плюрализм, горизонтальный внутренний политический конфликт, вертикальный внутренний политический конфликт, внутригосударственный конфликт.

N.K. BAGHDASARYAN

**INTERNAL POLITICAL CONFLICT AND WAYS OF ITS REGULATION
APPROACHES**

The article addresses one of the most fundamental issues in political science: internal/intrastate conflict. The article studies the essence, nature, types, and relevance. The characteristics of internal political conflicts influenced by different regimes have been analyzed and the unique features and nature of horizontal and vertical conflicts have been highlighted.

Keywords: internal political conflict, totalitarian regimes, hyper-centralization, pluralism, horizontal internal political conflict, vertical internal political conflict, intra-state conflict.

ՀՏԴ 316.48 (479.25)

Ս.Գ. ՄԱՆԹԱՇՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Դիտարկվում են հարցեր կոնֆլիկտների սոցիոլոգիական վերլուծության փորձից:

Առանցքային բաներ. կոնֆլիկտ, սոցիալական կոնֆլիկտ, սոցիալ-աշխատանքային կոնֆլիկտ, աշխատանքային կոնֆլիկտ, կորպորատիվ մշակույթ:

Սոցիալական կոնֆլիկտները ավանդաբար հանդիսանում են հասարակության զարգացման ցանկացած փուլի անբաժանելի մաս: Կոնֆլիկտը, հասարակական կյանքի բնույթով պայմանավորված, հասարակական էվոլյուցիայի հաստատուն և անխուսափելի տարր հանդիսացող, լայնորեն տարածված երևույթ է: Կոնֆլիկտային իրավիճակներ առաջանում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, գինվորական, ընտանեկան, աշխատանքային և այլն:

Որպես մարդկանց փոխգործողության տեսակ և ձևի արտահայտում՝ կոնֆլիկտները հանդիսանում են փիլիսոփայության, պատմության, իրավունքի, հոգեբանության, սոցիոլոգիայի և մի շարք այլ գիտությունների հետազոտության մշտական օբյեկտ, իսկ կոնֆլիկտների հիմնախնդիրների հետազոտությունը՝ սոցիոլոգիական գիտության ավանդական և հիմնական ուղղություններից մեկն է [1]:

Սոցիալական միջավայրում կոնֆլիկտների պատճառների ուսումնասիրության բազմաթիվ սոցիոլոգիական և տնտեսագիտական աշխատանքներ առկա էին դեռևս XIX դարում: Սոցիոլոգիական գրականությունում հանդիպում է տեսակետ այն մասին, որ հենց XIX դարում առաջացած սոցիալական դարվինիզմի